ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

29.08.2019

342-71

ՀՀ վարչապետ պարոն Նիկոլ Փաշինյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Մեծարգո պարոն վարչապետ,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել փաստաբան Վահե Հովսեփյանը՝ խնդրելով աջակցել իրեն տեղեկություն ստանալու հարցում: Փաստաբանը նշել է, որ 2019թ. հունիսի 13-ին տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել է Ձեզ: 2019թ. հունիսի 21-ին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ Մնացական Բիչախչյանից ստացվել է պատասխան գրություն (N2253750), որով սակայն սպառիչ պատասխան չի տրվել փաստաբանի հարցմանը:

Ուստի ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն՝ ի պատասխան հետևյալ հարցերի:

2012թ. մարտի 14-ին Հայաստանի Հանրապետության քաղաքացի Էդմոն Հրաչիկի Մարուքյանը՝ 2012թ. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ Վանաձորի թիվ 30 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու առաջադրվելու համար ՀՀ Ոստիկանությունից ստացել է տեղեկանք, որ նա վերջին հինգ տարում մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի Հանրապետությունում վերջին հինգ տարում մշտապես բնակվելու, այդ թվում՝ Հայաստանից դուրս 6 ամիս և ավելի ժամկետով անընդմեջ բնակվելու հիմքերը, հանգամանքները և փաստերը ստուգում է ՀՀ Ոսիկանության անձնագրային և վիզաների վարչությունը, երբ անձը ներկայացնում է դիմում պատգամավորի թեկնածու առաջադրվելու վերաբերյալ: Այդ դեպքում ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը անհրաժեշտ տեղեկություններ է ձեռք բերում ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից, որտեղ զետեղված է քաղաքացիների Հայաստանի Հանրապետության տարածք մուտքի և ելքի վերաբերյալ տեղեկատվությունը:

1. Արդյո՞ք տրման պահին Էդմոն Հրաչիկի Մարուքյանին տրամադրված այդ տեղեկանքը համապատասխանել է տվյալ պահին Հայաստանի Հանրապետության տիրապետման ներքո եղած ու գտնված պաշտոնական՝ այն է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում զետեղված տեղեկություններին,
2. Արդյո՞ք 2012թ. ԱԺ ընտրությունների ժամանակ Վանաձորի թիվ 30 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու առաջադրվելու համար Էդմոն Հրաչիկի Մարուքյանին տրամադրված տեղեկանքի հիմքերը ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ստուգվել են սահմանված ընթացակարգին համապատասխան,
3. Արդյո՞ք ՀՀ Ոստիկանության կողմից այդ տեղեկանքը տրամադրելը համապատասխանել է տվյալ պահին գործող ՀՀ օրենսդրության պահանջներին,
4. Ի՞նչ հիմքով է Էդմոն Հրաչիկի Մարուքյանին՝ 2012թ. Ազգային ժողովի ընտրություններում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու առաջադրվելու համար ՀՀ Ոստիկանությունը 2012թ. մարտի 14-ին տրամադրել տեղեկանք՝ վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը, խնդրում ենք գրավոր հարցման պատասխանի գործընթացը վերցնել Ձեր անձնական հսկողության տակ:

Հարգանքով,

Շուշան Դոյդոյան

ԻԱԿ Նախագահ